

ազատ և հավասար: Պետք է զսպել հարուստների անհագուրդ ախորժակը, որոնք հղիանում են աղքատների արյունը ծծելով: Պատահական չէ, որ Մայրավանեցու հայացքները համահնչուն էին նույն դարում ծավալված պավլիկյան աղանդավորական շարժման գաղափարախոսությունը: Միաժամանակ զարմանալի չէ, որ Մայրավանեցին իր հայացքների համար հլածվեց եկեղեցական իշխանությունների կողմից<sup>16</sup>:

Քրիստոնեական ուղղության, նրա պաշտոնական, պահպանողական թևին է պատկանում նաև կաթողիկոս Հովնան Օնեցցի (717—728) ինչպես և ալանավոր գիտնական Ստեփաննոս Սյունեցի (մհ. 735), որը ավելի հայտնի է որպես վաղ միջնադարի քերականագիտական մտքի ներկայացուցիչ և փիլիսոփայական երկերի (Գրիգոր Նյուսացու, Նեմեսիոս Եմեսացու և Դիոնիսիոս Արեոպոլիտի) հմուտ թարգմանիչ:

### 3. ՓԻԼԻՍՈՓՈՒՅԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՀՈՒՆԱՔԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՓԻԼԻՍՈՓՈՒՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Վաղ ֆեոդալիզմի շրջանում քրիստոնեական, ջատագովական ուղղությանը գուգընթաց առաջացել և իր վերելքն էր ապրում աշխարհիկ ուղղությունը: Արտահայտելով հայ հասարակության իշխող դասերի առաջադիմական թևի գաղափարական ձգտումները՝ այն շարունակում էր հայկական միջնադարի պայմաններում անտիկ փիլիսոփայության և բնագիտության գիծը: Հայ հասարակության որոշ շրջաններում քրիստոնեությունն ընդունելուց հետո էլ ուժգին ձգտում և հետաքրքրություն կար հին հունական՝ բարձր մակարդակի հասած հոգևոր մշակույթի նկատմամբ:

Մինչև V դարի 60-ական թվականները կրոնամեկնողական, հայրախոսական (patristica) և պատմական երկերի թարգմանությունները, ինչպես և նույն բնույթի հայ հեղինակների ինքնուրույն ստեղծագործությունները, հիմնականում բավարարում էին հայ մշակույթի գործիչների առաջին սերնդի հոգևոր պահանջմունքները: Այդ երկերը լիովին արտահայտում էին ներքին ու արտաքին հակառակորդների դեմ մղած գաղափարական պայքարի էությունը: Սակայն ակներև է, որ V դարի առաջին կեսի թարգմանական գրականությունն իր բովանդակությամբ և գաղափարական ուղղվածությամբ միակողմանի բնույթ էր կրում: Եվ այն չէր կարող բավարարել նոր սերնդի պահանջները, որն արդեն գործ ուներ նոր հակառակորդների հետ: Սասանյան արքունիքը, հանդիպելով հայ հասարակության բոլոր խավերի կատաղի դիմադրությանը, 50-ական թվականներից հետո հրաժարվեց հայերին հավատափոխ անելու, զրադաշտականություն տարածելու իր ծրագրից: Եվ այդ իրավիճակում, արդեն Բյուզանդական կայսրության սադրանքներով, սկսեցին գլուխ բարձրացնել Քաղկեդոն-

<sup>16</sup> Երկար ժամանակ Հովհան Մայրավանեցու ճառերը վերագրվում էին Հ. Մանդակունուն. այդ իր արտահայտությունն է գտել նաև վենետիկյան երկու հրատարակություններում՝ «Տեառն Տովհաննու Մանդակունույ ճառք», առաջին տպ.՝ 1836, երկրորդը՝ 1860: Ապացուցված պետք է համարել այն դրույթը: որ այդ ճառերից «եթառ վարուց» հատվածը, ինչպես և «Կնիք հաւատոյ» ժողովածուն պատկանում են Հ. Մայրավանեցուն: Տե՛ս Կ. Տեր-Մկրտչյան, Հովհան Մանդակունի և Հովհան Մայրագոմեցի, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 92—100, ինչպես նաև՝ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1944, էջ 358—363:

նի ժողովի որոշումների կողմնակիցները, սկսեցին թեժանալ միաբնակների և երկաբնակների վեճերը Քրիստոսի բնության շուրջը: V դարի 50—70-ական թվականներին ողջ քրիստոնեական աշխարհը ներգրավվեց այդ կատաղի վեճերի մեջ և բաժանվեց կրկու թշնամացող կողմերի:

Հայ գաղափարախոսները, հասկանալի է, չէին կարող շորոշել իրենց դիրքը այդ՝ արտաքուստ վերացական բնույթ ունեցող հարցի նկատմամբ: Այն ուներ հետուն գնացող քաղաքական հետևանքներ. քաղկեդոնականությունը դառնում էր բյուզանդական արքունիքի քաղաքական ճնշման լծակներից մեկը, ազգային եկեղեցիները Կ. Պոլսի պատրիարքին և առհասարակ թեոկրատական սկզբունքներով կառուցված կայսրությանը ենթարկելու մի նոր միջոց: Այդ վեճերին մասնակցելու, սեփական դիրքերը պաշտպանելու համար անհրաժեշտ էր ունենալ փիլիսոփայական լուրջ պատրաստություն, իմանալ իմացաբանություն և տրամաբանության ուսմունքները, փիլիսոփայության և կրոնի պատմությունը, վիճաբանության ու ճարտասանության կանոնները և մի շարք այլ գիտություններ ու արվեստներ: Աշխարհիկ գիտությունները և աշխարհիկ կրթությունը դիտվում էին արդեն ոչ որպես պերճանք և «արտաքին», հեթանոսական մշակույթի հանդեպ ցուցաբերվող ինչ-որ կասկածելի մի հակում, այլ անհրաժեշտ հենարան բաղմապիսի աստվածաբանական խնդիրների հիմնավորման ու մեկնաբանման համար, որոնց շուրջ ծագած վեճերը տասնամյակ առ տասնամյակ ստանում էին ավելի սուր բնույթ: Այս պատճառներն իսկ սրեցին փիլիսոփայական և այլ աշխարհիկ գիտական գրականության ստեղծման հարցը:

Այդ խնդրի իրագործմանը ձեռնամուխ եղան Մաշտոցի կրտսեր աշակերտները՝ սկսած V դարի 60-ական թվականներից: Եթե նրանց ուսուցիչների սերունդը հիմնականում սահմանափակվում էր աստվածաբանական-իմաստասիրական խնդիրներով, հայ եկեղեցական գրականության ստեղծմամբ և զլխավորապես կրոնադավանաբանական երկերի թարգմանությամբ, ապա աշակերտների կրտսեր սերունդը, հիմնականում արդեն ազատ լինելով այդ անհրաժեշտությունից, նոր իրավիճակում հայացքը դարձրեց նաև աշխարհիկ գրականության ու գիտության հուշարձանների վրա: Աշխարհիկ, բուն գիտական երկերի ստեղծման և այլ լեզուներից նման ստեղծագործությունների թարգմանության համար անհրաժեշտ էր ընդլայնել գրաբարի բառապաշարը, հարստացնել այն հատուկ մասնագիտական տերմիններով և առհասարակ գիտական լեզվին անհրաժեշտ դարձվածքներով ու հասկացություններով: Դրանով հունաբան դպրոցի հետևորդները ձգտում էին հայ դպրության մեջ ներմուծել անտիկ գիտության ու փիլիսոփայության նվաճումները և մղում տալ հայրենի աշխարհիկ գիտության զարգացմանը:

Անհրաժեշտ է նշել հունաբան դպրոցի գործունեության մի կարևոր առանձնահատկությունը, որը բնորոշում է հունաբաններին և բացատրում այդ դպրոցի դերն ու բարերար ազդեցությունը հայ գիտության և հատկապես փիլիսոփայության հետագա զարգացման վրա: Բանն այն է, որ հունաբանները, լինելով անտիկ գիտության քաջատեղյակ մարդիկ, ի տարբերություն նախորդ թարգմանիչների և գրողների, հետևում էին այլ ծրագրի, իսկ թարգմանությունների ընտրության ու կատարման ընթացքում կիրառում էին այլ սկզբունքներ: Նրանք լավատեղյակ էին անտիկ աշխարհում մշակված և վաղ միջնադարում ընդունված գիտությունների դասակարգմանը: Ըստ այդ դասակարգման, մարդ-

կային գիտությունը բաժանվում է բանական և գործնական արվեստների՝ իրենց հին առումով: Բանական արվեստն իր հերթին բաժանվում էր քերականության, ճարտասանության և փիլիսոփայության (տրամաբանության կամ դիալեկտիկայի): Հետագայում որոշ փոփոխություններով և շրջանակների նեղացումով բանական արվեստի այս մասը դարձավ միջնադարյան կրթության եռյակի հիմքը: Փիլիսոփայությունը, որն այդ դասակարգման կենտրոնում էր, իր հերթին բաժանվում էր երկու մասի՝ տեսական և գործնական փիլիսոփայության: Տեսական փիլիսոփայությունը ընդգրկում էր բնաբանությունը (ֆիզիկան), մաթեմատիկան և բնազանցությունը (մետաֆիզիկան, հետագայում՝ աստվածաբանությունը): Մաթեմատիկան իր հերթին բաժանվում էր շորս բաղկացուցիչ մասերի՝ թվաբանության, երաժշտության, երկրաչափության և աստղաբաշխության, որից առաջացավ միջնադարյան կրթության, այսպես կոչված, քառյակը:

Համադրելով այս հին դասակարգումը հունարան դպրոցի արտադրանքի հետ, մենք տեսնում ենք, որ հունարանները հետևողականորեն կիրառել են այն իրենց գործունեության մեջ և, ելնելով գիտության ամենախոշոր առաջին բաժանումից, որի մեջ ընդգրկվում էին քերականությունը, ճարտասանությունը և փիլիսոփայությունը, նախ ձեռնամուխ են եղել հայերեն քերականության սահղծմանը, մի գիտություն, որը դիտվել է կրթության նախապայման և առաջին անհրաժեշտ աստիճան:

Եվ ահա հունարան ուղղության գործիչները 460—70-ական թվականներին առաջին հերթին թարգմանում են հին հունարեն քերականության կարկառուն ներկայացուցիչ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» երկը, որն իր ոճով, լեզվով ու բառապաշարով մի նոր երևույթ էր հայոց գրականության համար, այնուհետև Ափթոնիոսի և Թեոն Ալեքսանդրացու ճարտասանական երկերը («Գիրք պիտոյից» և «Յաղագս ճարտասանական կրթութեանց»):

Դրանից հետո, արդեն շոշափելի բառապաշար կուտակած, կարելի էր մտածել փիլիսոփայական գործեր թարգմանելու և ստեղծելու մասին: Սկզբում նրանք վերցնում են թարգմանության համար համեմատաբար ավելի հեշտ և քրիստոնյա ընթերցողի համար սրտամոտ հեղինակի երկեր: Փիլիսոփայական թարգմանական գրականության հնագույն շերտին են պատկանում հելլենիստական աշխարհի ականավոր դեմքերից մեկի, I դարի խոշորագույն փիլիսոփա Փիլոն Եբրայացու երկերի հայերեն թարգմանությունները՝ կատարված 470—480-ական թվականներին: Նրա գրչին պատկանող շատ գործեր պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Օրինակ, «Յաղագս նախախնամութեան», «Վասն լինելութեանն», «Լուծմունք ելիցն», «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացը» և այլ երկեր: Դրանցից բացի նույն ժամանակ հայերեն թարգմանվեցին Փիլոնի և այլ՝ հունարեն բնագրերով մեզ հասած երկերը: Հայ փիլիսոփայության և գրականության մեջ Փիլոնը զգալի հետք է թողել: Փիլոնի գործերը թարգմանելիս հունարաններն ստեղծում են բազմաթիվ նոր հայերեն տերմիններ, բայց դրանք դեռ այն նեղ մասնագիտական տերմինները չեն, որոնք պետք են իմացաբանական, տրամաբանական և բնափիլիսոփայական խնդիրներով զբաղվելու համար: Այդ երկերն իրենց բնույթով ու բովանդակությամբ և՛ փիլիսոփայական են, և՛ աստվածաբանական: Դրանք հիմնականում նվիրված են Աստվածաշնչին, նրա Հին կտակարանի ալլաբանական փիլիսոփայական մեկնաբանությանը, որն ընդունելի էր քրիստոնյա գաղափար-

րախոսների համար Այդ պատճառով նրա երկերը լայնորեն տարածվեցին ողջ քրիստոնեական աշխարհում:

Փիլոնի գործերի, ինչպես նաև 480-ական թվականներին կատարված Երանոսի ու Տիմոթեոս Կուղի դավանաբանական գրվածքների թարգմանությունները, դրանց բովանդակած բազմաթիվ փիլիսոփայական տերմինները հնարավոր են դարձնում կատարելու երրորդ քայլը, այսինքն՝ բարձրանալու աշխարհիկ գիտությունների եսլակի վերին աստիճանը: Այդ ժամանակվանից է, որ հունաբաններն իրենց հայացքը դարձնում են դեպի բուն տրամաբանական գիտությունը, իսկ Ալեքսանդրիայում ու Աթենքում ուսած հունաբանների համար դրա ճանաչված ու լավագույն երկերը Արիստոտելի ստեղծագործություններն էին:

Սակայն մինչև Արիստոտելի բուն գործերի թարգմանությանն անցնելը, հունաբան դպրոցի գործիչները կատարում են ևս մի նախնական քայլ: Այդ ժամանակ բավականին տարածված էր հայտնի նորպլատոնական փիլիսոփա Պորփյուր Փյունիկեցու «ներածուծի» ստորոգութեանցն Արիստոտելի» երկը, որը գնահատվում էր որպես իսկական ներածություն կամ մուտք՝ Արիստոտելի տրամաբանությունը և առհասարակ փիլիսոփայական գիտությունն ուսումնասիրելու համար: Հենց դրանից էլ 490-ական թվականներին հունաբան դպրոցի ներկայացուցիչներն սկսում են փիլիսոփայական տրամաբանական երկերի իրենց թարգմանությունը, որը հնագույն է մասնագիտական փիլիսոփայական թարգմանությունների շարքում: Այդ ժամանակ կատարվում է ամենավճռական քայլը, փիլիսոփայական մասնագիտական տերմինաբանության ստեղծման ուղղությամբ: Բազմաթիվ տերմիններ, որոնք չկային հայերենում և որոնց բացակայությունը հնարավոր չէր դարձնում այդ գիտության զարգացումը Հայաստանում, առաջին անգամ ստեղծվում են Պորփյուրի թարգմանության ընթացքում:

Ունենալով արդեն որոշակի հաջողություն և փիլիսոփայական մասնագիտական տերմինների անհրաժեշտ մասնագիտական բառապաշար, հունաբանները հնարավոր համարեցին ձեռնամուխ լինել Արիստոտելի երկերի և դրանց նվիրված մեկնությունների թարգմանությանը: 490-ական թվականներին թարգմանվեցին Արիստոտելի «Ստորոգութիւնք» («Կատեգորիաներ») և «Յաղագս մեկնութեան» («Մեկնաբանության մասին») երկերը: Այստեղ օգտագործվեց նախորդ տասնամյակներում ստեղծված քերականական, ճարտասանական և հատկապես փիլիսոփայական ողջ տերմինաբանությունը: Եվ, քանի որ դա լիովին չէր կարող բավարարել Արիստոտելի երկերի բարդ ու հարուստ բառապաշարի փոխադրմանը, դրանց թարգմանության ընթացքում ստեղծվեցին տասնյակ նորանոր մասնագիտական տերմիններ: Հայերեն փիլիսոփայական բառապաշարն այնքան հարստացավ, որ դրա միջոցով արդեն կարելի էր արտահայտել ցանկացած վերացական միտք ու գաղափար, թարգմանել մյուս ավելի հեշտ հեղինակներին և ստեղծել տրամաբանական, իմացաբանական ինքնուրույն երկեր: Դրանից հետո առանձին դժվարություն չէր ներկայացնում Արիստոտելի երկերին նվիրված մեկնությունների թարգմանությունը կամ անտիկ փիլիսոփաների հետքերով գնացող նորպլատոնականների երկերի հայացումը:

Արիստոտելից հետո 490—500-ական թվականներին թարգմանվում են հայտնի նորպլատոնական Յամբլիխոսին վերագրվող երկու ընդարձակ մեկնություններ՝ նվիրված «Ստորոգութիւնք» և «Յաղագս մեկնութեան» երկերին, որոնք

ամբողջությամբ ընդգրկում են մեկնվող աշխատությունների բնագրերը: Սակայն պետք է շեշտել, որ սկզբնական շրջանում այդ անսովոր և արհեստական հայերենով լույս ընծայվող աշխատությունները, հավանաբար, հասկանալի էին լինում առավելապես հունական կրթություն ստացած մտավորականներին, որոնք աստիճանաբար ընտելանում էին նոր տերմիններին ու դարձվածքներին:

Անտարակույս, սկզբնական շրջանում չափազանց դժվար պետք է լիներ այդ նորաստեղծ բառապաշարով ինքնուրույն փրկիսոփայական երկեր գրելը: Որոշ ժամանակ էր հարկավոր այդ մասնագիտական լեզուն ու տերմինները մարսելու համար: Ուստի, հավանաբար, հունական կրթություն ստացած իմաստասերների համար ավելի դյուրին պետք է լիներ իրենց գործերը նախապես գրել վաղուց կայունացած և միջազգային նշանակություն ունեցող հունարենով և ապա թարգմանել դրանք հայերեն, օգտագործելով նախորդ թարգմանություններում ստեղծված բառերը, շտկել անհաշողները և ստեղծել նորերը: Որ հենց այդ ճանապարհով են գնացել հունարան դպրոցի գործիչները, վկայում է Դավիթ Անհաղթի ստեղծագործությունը: Նրա երկերի պահպանված հունարեն և հայերեն տարբերակները, ինչպես ապացուցել են Ն. Ադոնցը և Հ. Մանանդյանը, վկայում են, որ իրոք մասնագիտական փրկիսոփայական այնպիսի երկեր, ինչպես «Մահմանք իմաստասիրութեան», Արիստոտելի «Անալիտիկայի» ու «Կատեգորիաների», նաև Պորփյուրի «Ներածության» հմտալից մեկնությունները Գավիթ Անհաղթը շարադրել է նախ հունարեն՝ VI դարի առաջին կեսին, իսկ այնուհետև դրանք թարգմանվել են հայերեն, հավանաբար, հեղինակի հրակողությամբ կամ մասնակցությամբ:

Հունարան դպրոցի խոշորագույն նվաճումներից էր նաև հուշակավոր հույն իմաստասեր, անտիկ փրկիսոփայության կարկառուն ներկայացուցիչ Պլատոնի երկերի թարգմանությունը՝ կատարված VI դարի սկզբում<sup>17</sup>: Հունարանները, մեծ մասամբ իրենց կրթությունն ստանալով Ալեքսանդրիայում, նորալատոնականության այդ խոշորագույն կենտրոնում և հարելով նորալատոնական ուղղությանը, կանգ չառան ոչ մի դժվարության առաջ և հայ ընթերցողին տվեցին իրենց հոգևոր հոք՝ Պլատոնի երկերի՝ «Տիմեոսի», «Ծվտիփրոնի», «Մինոսի», «Սոկրատի պաշտպանության» և «Օրենքների» հմուտ թարգմանությունները:

Պորփյուրի, Արիստոտելի և Պլատոնի երկերի թարգմանությունների շնորհիվ և հատկապես Դավիթ Անհաղթի աշխատություններով հայ գիտական գրականությունը, առաջին հերթին փրկիսոփայությունը մասնագիտանում ու աշխարհականանում է իր էությունում ու բովանդակությամբ: Այդ երկերը, հիմնականում նվիրված լինելով գոյաբանության, իմացաբանության, տրամաբանության, մասամբ նաև հասարակագիտության ու բարոյագիտության խնդիրներին, հայ իրականության մեջ դառնում են փրկիսոփայական գիտությունների զարգացման համար հաստատուն հիմք՝ համապատասխան հարուստ ու ճկուն տերմինաբանությամբ և բարձրացնում հայ փրկիսոփայական միտքը իր ժամանակի զարգացած ազգերի գիտության մակարդակին:

Հունարան դպրոցի թարգմանությունների կարևորագույն ու մեծ մասը կազմող փրկիսոփայական գրականությունը կոչված էր զինելու հայ մտավորականներին գաղափարական գոտեմարտում, մի գրականություն, որն իր համա-

17 Տե՛ս Ս. Արեշտայան, Պլատոնի երկերի հայերեն թարգմանության ժամանակը, «Բանբեր մատենադարանի», հ. 10, Երևան, 1971:

կողմանի և համապարփակ բնույթով պատասխանում էր գաղափարական վեճերում ծագող քաղաքական, դավանաբանական, բնագիտական և բարոյագիտական բազմապիսի կնճռոտ հարցերի<sup>18</sup>։

#### 4. ԱՇԽԱՐՀԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Թարգմանությունների միջոցով հայ գիտնականներն սկսեցին արագորեն յուրացնել անտիկ ժառանգությունը։ Այդ ընթացքում ծնվեցին և աշխարհիկ մտավոր ուղղությանը հետևող հայ քերականների ու մտածողների առաջին ինքնուրույն ստեղծագործությունները։ Դրանց թվին են պատկանում Դավիթ Քերականի, Մովսես Քերթովի և Անանունի՝ V դարի վերջին քառորդում գրված մեկնությունները՝ նվիրված Դիոնիսիոս Քրակացու «Քերականությանը»<sup>19</sup>։

Հին հայ մտածողների և թարգմանիչների այդ խմբի հայացքները գտնվում էին հելլենիստական գիտության ուժեղ ազդեցության տակ։ Հայ մշակույթի և փիլիսոփայության աշխարհիկ ուղղության ձևավորման ընթացքում հելլենիստական այդ ավանդույթները զգալի վերելք էին ապրում, խթանելով միաթամանակ նաև ինքնուրույն փիլիսոփայական մտքի զարգացմանը։ Արվեստաբանական և գրականագիտական որոշ խնդիրներ ընդգրկող հին քերականության և ճարտասանության բնույթը հնարավորություն ընձեռեց հունարան դպրոցի արդեն առաջին գործիչներին իրենց մեկնողական աշխատություններում արծարծել արվեստի էության սեփական ըմբռնումները, արտացոլել հայկական միջավայրի գեղագիտական պատկերացումները և գեղարվեստի զարգացման միտումները։ Այդ մեկնությունները շափազանց նշանակալից ու արժեքավոր են որպես աշխարհիկ գիտափիլիսոփայական բովանդակություն ունեցող առաջին երկեր, որոնք դուրս են գալիս քրիստոնեական փիլիսոփայության շրջանակներից, թեև որոշ գաղափարներ դրանց մեջ հարմարեցված են հայոց եկեղեցու շահերին։

Դիոնիսիոս Քրակացին և նրա հայ մեկնիչները սահմանում են քերականությունը որպես մի արվեստ, որը պատկանում է գիտության բնագավառին։ Սակայն էական տարածայնությունը Դիոնիսիոսի ու նրա հայ մեկնիչների միջև սկսվում է իսկույն ևեթ, երբ սահմանվում է թե ինչպիսի գիտություն է այն։ Դիոնիսիոսը ելնում է էմպիրիկ սկզբունքից և գտնում, որ քերականությունը փորձի վրա հիմնված գիտություն է<sup>20</sup>, մինչդեռ հայ մեկնիչների ամբողջ խումբը քերականության և առհասարակ արվեստի սահմանման հարցում ելնում է հակադիր՝ ռացիոնալիստական սկզբունքից։ Օրինակ, ըստ Դավիթ Քերականի, փորձը կամ հմտությունը բնութագրվում է որպես ասնկար սովորութիւն՝ ըստ նմանութեան երթալոյ անասոց ի սովորական տեղիսն»<sup>21</sup>, մինչդեռ արվեստը հենվում է բանականության վրա և այդ պատճառով կարիք ունի ճառագեղ գի-

18 Հունարան դպրոցի գործունեության և գրական արտադրանքի մասին մանրամասն տե՛ս Լ. Մաճաղյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928; նաև՝ С. С. Аревшатян, Формирование философской науки в древней Армении (V—VI вв.), Ереван, 1973.

19 Տե՛ս Н. А. Адоны, Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915.

20 Նույն տեղում, էջ СХХІХ. Տե՛ս նաև՝ А. А. Адамян, Эстетические воззрения средневековой Армении, Ереван, 1955, стр. 24—52.

21 Դավիթ Քերական, Մեկնութիւն քերականին, հրատ. Գ. Զահուկյանի, Վանքի մատենադարանի, Կ. Յ., 1956, էջ 247: